



ՏԺԳ Հայաստանի գործունեության ամփոփ տեղեկագիր (Հունվար-Հունիս 2022)

Գյումրի

26, Մեպտեմբեր 2022

1. Առաջարկներ

- ❖ Փետրվարին «Տեղական ժողովրդավարության գրասենյակ» հիմնադրամը Հայաստանում Գերմանիայի դեսպանությունն է ներկայացրել «Տեղական զարգացման գործակալներ» առաջարկը, որը նպատակ ունի խթանել համայնքի անդամների կարողությունները և հմտությունները բիզնեսների և սկսնակ ձեռնարկությունների ստեղծման գործում, ինչպես նաև նպաստել համայնքի զարգացմանը և գործազրկության մակարդակի նվազմանը կրթության և նորարարական մոտեցման միջոցով: /հայտը մերժվել է/:
- ❖ Մարտ ամսին «Տեղական ժողովրդավարության գրասենյակ» հիմնադրամը ներկայացրել է «Ֆորում- թատրոն. հանրության մասնակցության ինտերակտիվ և նորարարական միջոց» առաջարկը: Առաջարկի նպատակն էր խթանել հանրության մասնակցությունը խնդիրների անվանման և ձևակերպման գործում՝ ինտերակտիվ գործիքների և որոշումների կայացման գործընթացներում կանանց դերը հզորացնող նորարարական մոտեցման միջոցով: / հայտը մերժվել է/:
- ❖ «Տեղական ժողովրդավարության գրասենյակ» հիմնադրամը դիմել է The Black Sea Trust-ի կողմից տարածաշրջանային համագործակցության առաջարկին: «AdvocoVID- Covid-ի դեմ պատվաստումների ջատագովություն» առաջարկը՝ Շիրակի մարզի համայնքներում խթանելու մարդկանց տեղեկացվածության և տեղեկատվության փոխանակումը պատվաստումների վերաբերյալ նորարարական մոտեցումների և տեղական իշխանությունների հետ շահերի պաշտպանության միջոցով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում էին շահերի պաշտպանության և իրազեկման տարբեր արշավներ՝ տեղական իշխանությունների, համայնքի անդամների, երիտասարդների ներգրավվածությամբ: /հայտը մերժվել է/:
- ❖ Մայիսին արտակարգ իրավիճակների արձագանքման ծրագրերի համար միջազգային և ազգային գործընկերների կոնսորցիումի կողմից հայտարարվեց առաջարկների մրցույթ: Հիմնադրամն առաջին փուլի համար ուղարկել է «WINGS» հայտը՝ նպաստելու Արցախյան պատերազմից տուժած հարկադիր



ՏԺԳ Հայաստանի գործունեության ամփոփ տեղեկագիր (Հունվար-Հունիս 2022)

վերաբնակների և ընտանիքների ինտեգրմանը և աշխատանքային հնարավորություններին՝ բարելավելով ապրելակերպը և նոր իրականությանը հարմարվելը / հայտը մերժվել է/:

- ❖ Հունիսին ՏԺԳ հիմնադրամը Հայաստանում Բուլղարիայի դեսպանություն է ուղարկել «ԽԵԼացի երիտասարդներ. առանցք առաջադեմ համայնքի համար» առաջարկը: Ծրագրի ընդհանուր նպատակն էր ոչ ֆորմալ կրթության և մշակութային մոտեցման միջոցով զարգացնել երիտասարդների գիտելիքները և կարողություններն ապագա կարիերայի ընտրության վերաբերյալ: /դեռևս պատասխան չկա/:
- ❖ ALDA-ն Մոլդովայի, Ուկրաինայի, Վրաստանի և Հայաստանի գործընկերների հետ համատեղ առաջարկ է ուղարկել Եվրոպական հանձնաժողովին «ԱՊԱԳԱ՝ երիտասարդական ձեռներեցության խթանում Արևելյան Եվրոպայում»՝ ընդգրկելով Հայաստանը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան: /Դեռևս ոչ մի պատասխան/:

Հանդիպումներ

Մայիսի 6-ը կարևոր և նշանակալից օր էր ՏԺԳՄ ցանցի համար, քանի որ 2 տարվա ընդմիջումից հետո հնարավորություն ընձեռվեց անձամբ մասնակցել Գլխավոր Համաժողովին և հարակից միջոցառումներին: ՏԺԳ Հայաստանի պատվիրակ Լուսինե Ալեքսանդրյանը նույնպես հրավիրված էր մասնակցելու «Աջակցություն տեղական ժողովրդավարությանը, աջակցություն խաղաղությանը և կայունությանը» խորագրով Գլխավոր Համաժողովին, որը տեղի ունեցավ արևոտ Ստրասբուրգում ՏԺԳՄ-ի գործընկերների, անդամների, տեղական իշխանությունների և ԲՀԿ-ի ներկայացուցիչների հետ:

ՏԺԳ Հայաստանի գործունեության ամսույի տեղեկագիր (Հունվար-Հունիս 2022)



Համաժողովին նախագահ նշանակվեց Մարիուպոլի ՏԺԳ-ի պատվիրակ Տետիանա Լոմակինան, որն արժանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելությանը: Աջակցություն և խաղաղություն և համերաշխություն Ուկրաինային կարմիր գիծ էր բոլոր շնորհանդեսների և ելույթների համար: Ընդհանուր ժողովը հաստատեց օրակարգը, արձանագրությունները, ֆինանսական հաշվետվությունները:

Գլխավոր համաժողովը հիանալի առիթ էր ՏԺԳ Հայաստանի համար հանդիպելու միջազգային գործընկերներին պրակտիկայի, փորձի և գաղափարների փոխանակման համար:



ՏԺԳ Հայաստանի գործունեության ամփոփ տեղեկագիր (Հունվար-Հունիս 2022)

- ❖ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության կողմից մայիսի 13-ին Գյումրիում կայանալիք ԵՄ-Հայաստան դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակին նվիրված ընդունելությանը հրավիրված էին ՏԺԳ Հայաստանի պատվիրակ Լուսինե Ալեքսանդրյանը և օգնական Լիլիթ Գրիգորյանը:



- ❖ ՏԺԳ Հայաստանի տնօրեն Լուսինե Ալեքսանդրյանը և համակարգող Լիլիթ Գրիգորյանը մասնակցեցին մայիսի 20-ին Եվրոպայի խորհրդի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում» ծրագրի եզրափակիչ համաժողովին: Համաժողովը ողջունեցին Ավստրիայի զարգացման համագործակցության գրասենյակի ղեկավար պարոն Կլաուս Կապերը, տարածքային զարգացման և ենթակառուցվածքների փոխնախարար Վաչե Տերտերյանը: Երկու նիստերը վարեցին պարոն Վահան Մովսիսյանը և տիկին Արմինե Թուխիկյանը՝ անդրադառնալով ՏԻՄ բարեփոխումների առաջարկների, իրավական դաշտի, հաջողված ծրագրերի արդյունքներին: Եվրախորհրդի լավ կառավարման փորձագիտական կենտրոնի (Ստրասբուրգ) ծրագրի համակարգող Նայլ Շիրինը նույնպես նշեց ծրագրի կարևորությունը, արժեքները և կայունությունը:



ՏԺԳ Հայաստանի գործունեության ամփոփ տեղեկագիր (Հունվար-Հունիս 2022)



Լինելով ծրագրի Ղեկավար կոմիտեի անդամ՝ Լուսինե Ալեքսանդրյանը մասնակցեց եզրափակիչ հանդիպմանը, որի ընթացքում օրակարգը, արձանագրությունները հաստատվեցին, ներկայացվեցին հաշվետվություններ, և անդամները կարծիքներ հայտնեցին տեղական ինքնակառավարման ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ՝ ԵՄ հետ ապագա հնարավոր համագործակցության համար:

ՏԺԳ Հայաստանի գործունեության ամփոփ տեղեկագիր (Հունվար-Հունիս 2022)

❖ Ծրագրեր

«Շահերի պաշտպանություն տեղական մակարդակում – Շիրակ» – ՏԺԳ Հայաստան

Երկու ամիս հետաքրքիր և դժվարին աշխատանք՝ (2021թ. դեկտեմբեր-2022թ. հունվար) իրականացնելու «Շահերի պաշտպանություն տեղական մակարդակում-Շիրակ» ծրագրի շրջանակներում: Համագործակցելով Համայնքների ֆինանսիստների Միավորման /ՀՖՄ/-ի հետ՝ «Տեղական ժողովրդավարության գրասենյակ» հիմնադրամի կողմից իրականացվել են մի շարք հանդիպումներ Շիրակի մարզի խոշորացված համայնքներում՝ վարչական ղեկավարների, ավագանու անդամների, քաղաքապետարանների աշխատակազմի և ակտիվ քաղաքացիների մասնակցությամբ:

Չորս հանդիպում է տեղի ունեցել Արթիկ, Անի, Աշոցք խոշորացված համայնքներում՝ համայնքային խնդիրներն ըստ առաջարկվող թեմաների ընդլայնելու, շահերի պաշտպանության միջոցով հետագա քննարկման անցնելու նպատակով:



Հանդիպումները մեծ նշանակություն ունեցան, քանի որ պարզ քննարկումներն ու զրույցները տեղացիների հետ տալիս են իրականության պատկերը արմատական տեսանկյունից և արտացոլում կարիքներն ու խնդիրները:

ՏԺԳ Հայաստանի գործունեության ասիոսի տեղեկագիր (Հունվար-Հունիս 2022)



Շիրակում իրականացված հանդիպումները խոշոր ծրագրի մի մասն է, քանի որ նմանատիպ գործողություններ են իրականացնում Հայաստանի ողջ տարածքում բոլոր մարզերում՝ տեղական և մարզային մակարդակով: Յուրաքանչյուր մարզից ստացված առաջարկությունների փաթեթը կմշակվի ՀՖՄ փորձագետների կողմից և կուղարկվի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:



«Տեղական ժողովրդավարության դպրոցը» ստեղծվել է Համայնքների ֆինանսիստների միավորման /ՀՖՄ/, Եվրասիա հիմնադրամի և Տեղեկատվական համակարգերի զարգացման և ուսուցման կենտրոնի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող

ՏԺԳ Հայաստանի գործունեության ամփոփ տեղեկագիր (Հունվար-Հուլիս 2022)

Հանրային Մասնակցություն Տեղական Ինքնակառավարմանը (ՀաՄաՏեղ) ծրագրի շրջանակներում:



«Համագործակցություն Գյումրու Երիտասարդական պալատի հետ»

Համագործակցելով Գյումրու Երիտասարդական պալատի հետ՝ «Երիտասարդական ճամբար-ամառ 2022» «Տեղական ժողովրդավարության գրասենյակ» հիմնադրամն անցկացրեց դասընթաց և մրցույթ՝ նվիրված բնության պահպանությանը, կլիմայի փոփոխությանը և քաղաքացիների մասնակցությանը, որին ակտիվորեն ներգրավված էին 12-16 տարեկան ավելի քան 25 աշակերտ: Բոլոր աշակերտները մասնակցության համար ստացան փոքրիկ նվերներ, իսկ առաջին երեք մրցութային տեղեր հաղթողները բնության պահպանության և երկրագնդի վերաբերյալ գրքեր:



ՏԺԳ Հայաստանի գործունեության ամփոփ տեղեկագիր (Հունվար– Հունիս 2022)

Շնորհակալություն Գյումրու Երիտասարդական պալատին և տնօրեն Լիլիթ Մակարյանին մշտական համագործակցության համար:

